

ՍԱՂՄՈՍ 50

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստված արդարի և ամբարշտի Դատավորը	Աստված Արդար Դատավորը	Աստվածային դատաստանի օրհներգություն	Ճշմարիտ երկրպագություն	Հոգով և Ճշմարտությանը երկրպագություն
<u>MT ներածություն</u> Ասափի Սաղմոսը				
50:1-6	50:1-3	50:1-2 50:3-6	50:1-2 50:3-6	50:1-3ա 50:3բ-4 50:5-6
50:7-15	50:7-11 20:12-15	50:7-11 50:12-15	50:7-11 50:12-15	50:7 50:8-9 50:10-11 50:12-13 50:14-16ա
50:16-21	50:16-21	50:16-18 50:19-21	50:16-18 50:19-21	50:16բ-17 50:18-19 50:20-21
50:22-23	50:22-23	50:22-23	50:22-23	50:22-23

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գրուիք: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա մեկ այլ Սաղմոս է, որը պարունակում է տիեզերական տարր (տես՝ Սաղմ. 50:1, 4, 12, Սաղմ. 45:16, 46:10, 47:2, 10, 49:1): Սա ևս մեկ կերպ է հաստատելու ՅԱՀՎԵԻՆ որպես Արարիչ (Սաղմոս 104), միակ Աստված (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ):

Բ. Քանի որ Նա է Արարիչը, Նա է միակ Դատավորը, մարդիկ դատվելու են Աստծո հետ իրենց փոխհարաբերությամբ՝

1. հավատք (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐ-ՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ):
2. հնազանդություն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ)
3. երկրպագություն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ)
ոչ թե պարզապես ծեսեր կամ պատարագային արարողություններ կատարելու միջոցով:
Ճշմարիտ հավատքը նախքան ձեռքերին հասնելը մարդու սրտից է:

Գ. Այս Սաղմոսը բոլոր մարդկանց դատաստանի մասին չէ, այլ ուխտի ժողովրդի, երբ ամբողջ երկինքը, երկիրը, և բոլոր մարդիկ նայում են: Այս դատաստանն ունի հետևյալ նպատակները՝

1. վերականգնելու սրտանց հավատքը
2. հայտնելու ոմանց կեղծ հավատքը

Դ. Այս Սաղմոսը նկարագրում է՝

1. Այն մարդկանց, ովքեր ծեսերին մեծ ուշադրություն դարձնող հետևորդներ են (տես՝ Սաղմ. 50:7-15)
2. նրանց, ովքեր անհավատ հետևորդներ են (տես՝ Սաղմ. 50:16-21)
3. համառոտ հետևությունները Սաղմ. 50:22-23-ում

Ե. Գոյություն ունեն շատ ակնարկներ խոսելու մասին: Ուշադրություն դարձրե՛ք՝

1. խոսեց, Սաղմ. 50:1ա
2. կանչեց (այսինքն՝ վկայելու համար որպես ականատես), Սաղմ. 50:1բ, 4
3. նույնը ինչ #2
4. չի լռելու, Սաղմ. 50:3, 21ա
5. ՅԱՀՎԵԻ ուղղակի խոսքը, Սաղմ. 50:5,7
6. նույնը ինչ #5
7. կհռչակեն, Սաղմ. 50:6ա
8. Ես կխոսեմ, Սաղմ. 50:7ա
9. Ես կվկայեմ, Սաղմ. 50:7բ
10. հանդիմանել, Սաղմ. 50:8, 21
11. օրհնության պատարագ, Սաղմ. 50:14ա, 23ա
12. ՅԱՀՎԵՆ ասում է, Սաղմ. 50:16ա (Սաղմոսի մեծ մասը ՅԱՀՎԵՆ է խոսում, Սաղմ. 50:5,7-15, 16-21, 22-23)
13. պատմել, Սաղմ. 50:16բ
14. Իմ խոսքերը, Սաղմ. 50:17բ
15. իմ բերանը, Սաղմ. 50:19ա
16. քո լեզուն, Սաղմ. 50:19բ
17. խոսել, Սաղմ. 50:20ա
18. չարախոսել, Սաղմ. 50:20բ

Նրանց խոսքերով դու կմանաչես նրանց, քանի որ նրանց խոսքերը հայտնում են նրանց սրտերը (այսինքն՝ երկու խմբերը, տես՝ Մատթ. 12:33-37, Դուկաս 6:45):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 50:1-6

¹Հգորը Աստվածը՝ ՏԵՐԸ, խոսեց

Ու երկրին կանչեց արևածագից մինչև արևամուտ:

²Սիրոնից՝ գեղեցկության կատարելությունից, Աստված փայլեց:

³Մեր Աստվածը գալու է ու չի լռելու.

Նրա առջև սպառող կրակ և շուրջը սաստիկ մրրիկ է լինելու:

⁴Վերևից երկինքներին է կանչելու ու երկրին,

Որպեսզի դատի իր ժողովրդին:

⁵ «Ինձ մո'տ հավաքեցեք իմ սրբերին, նրանց,

Որ գոհաբերությամբ ուխտ արեցին ինձ հետ»:

⁶Եվ երկինքները կհռչակեն Նրա արդարությունը,

Քանի որ Աստված Ինքն է դատավոր: Մեյա:

50:1-6 Այս պարբերությունը բնութագրում է ՅԱՀՎԵԻՆ որպես արդար Դատավոր Այս Սաղմոսի մեծ մասի նկարագրությունը դատարանի տեսարան է՝

1. կանչեց երկիրը, Սաղմ. 50:1,4
2. երկու հավիտենական վկաները՝ երկինքն ու երկիրը (տես՝ 2 Օր. 4:26, 30:19, 31:28, 32:1), Սաղմ. 50:4
3. Աստված Ինքը Դատավորն է, Սաղմ. 50:6
4. Ես կվկայեմ քո դեմ, Սաղմ. 50:7. նկատե՛ք որ ամբողջ աշխարհը, երկինքն ու երկիրը կանչվում են որպես վկա ՅԱՀՎԵԻ մեղադրանքներին իր ուխտի ժողովրդի դեմ:

50:1 Ուշադրություն դարձրե՛ք անուններին՝ տիտղոսներին, որոնք օգտագործվում են Աստծո համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ)

1. *Էլ*, Սաղմ. 50:1 – BDB 42, ընդհանուր անուն Աստծո համար ՀՄԱ-ում՝ «ուժեղ լինել» արմատից
2. *Էլոհիմ*, Սաղմ. 50:1, 2, 3, 6, 7 (երկու անգամ), 14, 16, 23 – BDB 43, Աստված որպես ամբողջ կյանքի արարիչ, մատակարար և պահապան:
3. ՅԱՀՎԵ, Սաղմ. 50:1 – BDB 217, ուխտ կապող Աստված, Աստված որպես Փրկիչ, Ազատագրող (Սաղմ. 50:5)
4. *Էլիոն*, Սաղմ. 50:14 – BDB 751 II, տես ամբողջական գրառումը Սաղմ. 46:4բ-ում՝ «Բարձրյալ» (տես՝ 2 Օր. 32:8, Սաղմ. 9:2, 21:7, և այլն)
5. *Էլոսի*, Սաղմ. 50:22 – BDB 42, *Էլոհիմի* ԵԶԱԿԻՆ (հիմնականում Հոբի գրքում)

Հնարավոր է, որ առաջին երեքը միասին մի անուն կազմելու համար են (տես՝ Հեսու 22:22): LXX, NJB և AB (Էջ՝ 304) առաջարկում է՝ «աստվածների (*Էլոհիմ*) Աստվածը (*Էլ*) ՅԱՀՎԵՆ է»: Եղել է որոշակի գրական, աստվածաբանական պատճառ այս երեք անունների շարանը իրար կապելու համար, սակայն այն վերացել է մինչ մեր օրերը:

❖ «**երկիր**» Սա երբայրերեն *erets* (BDB 75, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՐ, ՀՈՂ, ԵՐԿՐԱԳՈՒՄ) բառն է: Չուզահեռ տերմինը՝ «աշխարհ» (BDB 385, տես՝ Սաղմ. 9:8, 18:15, 19:4, 24:1, 33:8, 50:12), գործածվում է հիմնականում Սաղմոսներում և Եսայի գրքում:

❖ «**արևածագից մինչև արևամուտ**» Այս արտահայտությունը (տես՝ Սաղմ. 113:3) համընդհանրության դարձվածք է, ինչպես որ «արևելքից մինչև արևմուտք» խոսքը: Բոլոր մարդիկ կանչված են ՅԱՀՎԵԻ դատարանը: Այս գաղափարը ՆԿ է ներմուծվել որպես՝

1. ոչխարների և այծերի դատաստան՝ Սատթ. 25:31-46
2. Քրիստոսի դատաստանի աթոռը՝ 2 Կորնթ. 5:10
3. մեծ ներմակ գահի դատաստան՝ Հայտն. 20:11-15

Սա ակնարկվում է 1 Կորնթ. 15:25-28-ում: Մարդիկ հաշիվ են տալու Աստծուն կյանքի իրենց տնտեսվարության համար:

50:2 «Միոն» Այստեղ Աստծո քաղաքը՝ Երուսաղեմը, բնութագրվում է որպես «գեղեցկության կատարելություն»: Սաղմ. 48:2-ում նա կոչվում է «գեղեցիկ դիրքով՝ ամբողջ երկրի ուրախությունն է»: Այս երկու նկարագրող արտահայտությունները միաձուլված են Ողբ 2:15-ում: Տես՝ Սաղմ. 2:2, 9:11, 20:1-ի գրառումները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՐԻԱ, ՍԱՂԵՄ, ՀԵԲՈՒՄ, ԵՐՈՒՍԱՂԵՄ, ՍԻՈՆ

❖ **«Աստված փայլեց»** Այս նույն ԲԱՅԸ (BDB 422, KB 424, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) կիրառվում է Սաղմ. 80:1-ում (*Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) և Սաղմ. 94:1-ում (նաև *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Սաղմ. 49:14-ում ես թվարկել եմ, թե ինչպես է լույսի նկարագրությունը կիրառվում նկատի ունենալով տարբեր բաներ: Աստված է աշխարհի լույսը (տես՝ Սաղմ. 27:1, Ես. 60:1-3, 19-20), ինչպես նաև Իր Որդին (տես՝ Հովհ. 8:12, 12:35): Նրանց շնորհիվ նաև Նրանց հավատարիմ հետևորդներն են (տես՝ Մատթ. 5:14, 6:23, Հովհ. 12:36):

50:3 Այս համարը սկսվում է երկու ՀԱՅՑԱԿԱՆՈՎ («թող. . . »)

1. թող մեր Աստվածը գա – BDB 97, KB 112, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
2. թող Նա լուռ չմնա – BDB 361, KB 357, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով:

Դատաստանի օրը հասել է և Աստծո մարդիկ առաջին են պատասխան տալու (տես՝ Երեմ. 25:29, 1 Պետ. 4:17):

❖ **«Նրա առջև սպառող կրակ է»** Կրակը հաճախ ասոցացվում է՝

1. Աստծո սրբության, մաքրության հետ՝ Դան. 7:10
2. մաքրվելու՝ Թվոց 32:23
3. դատաստանի՝ Ղևտ. 10:2, Թվոց 16:35

Այս նկարագրության ամբողջական ցանկի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ:

Այս համատեքստում այն ասոցացվում է երկրի վրա ֆիզիկական կործանման հետ, որը տեղի է ունենում երբ սուրբ Աստվածը մոտենում է («գալիս է», Սաղմ. 50:3ա) Իր ընկած ստեղծագործությանը (տես՝ Սաղմ. 18:7-15, 97:1-6):

50:4 «Երկինքները... երկիրը» Սրանք երկու պարտադիր վկաներն են (տես՝ Թվոց 35:30, 2 Օր. 17:6, 19:15) ՅԱՀՎԵԻ համար Իր ժողովրդին դատարան տանելու համար (տես՝ Սաղմ. 50:4-5, 7, 16-21, 22-23): Սրանք ներկայացնում են առաջին երկու ստեղծված բաները (այսինքն՝ երկիր մոլորակը և նրա մթնոլորտը):

50:5 «հավաքեցեք» Այս ԲԱՅԸ (BDB 62, KB 74, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) համատեքստային առումով գուցա հեռ է «կանչեցեք» (Սաղմ. 50:1,4) բառին: Նկատել, որ այն «աստվածավախներն» են (այսինքն՝ ուխտի ժողովուրդը), որոնք հավաքվեցին Դատաստանի Օրվա համար (այսինքն՝ «Քրիստոսի դատաստանի աթոռը» 2 Կորնթ. 5:10-ում նույնպես հավատացյալների համար է, ոչ թե անհավատների):

❖ Նկատել, թե ինչպես են ձեսերին հետևող մարդիկ նկարագրվում

1. Իմ սրբերը, Սաղմ. 50:5
2. որ զոհաբերությամբ ուխտ արեցին Ինձ հետ, Սաղմ. 50:5
3. ո՛վ, Իմ ժողովուրդ, Սաղմ. 50:7 (ուխտի տերմինաբանություն)
4. նրանց պատվիրված է (Սաղմ. 50:14-15)
 - ա. զոհության զոհեր մատուցել (*Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)
 - բ. կատարել Բարձրային արված քո ուխտերը (*Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)
 - գ. կանչել ՅԱՀՎԵԻՆ նեղության օրը (*Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)

❖ **«Իմ սրբերը»** Այս բառը՝ անունը (BDB 339) հաճախ է կիրառվում Սաղմոսներում նկատի ունենալով հավատարիմ հետևորդներին (տես Սաղմ. 4:3, 12:1, 16:10, 18:25, 30:4, 31:23, 32:6, 37:28, 43:1,

52:9 և այլն): Սաղմոս 16:10-ում այն վերաբերում է Մեսոպոտամիային՝ ըստ տիպաբանության և ՆԿ-յան մեջբերումների (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԵՍԻԱ):

Այստեղ այն մատնանշում է այն իսրայելացիներին, որոնք մեծապես կենտրոնանում են զոհաբերության ծեսերի վրա և ոչ բավականաչափ անձնական հավատքի և աստվածպաշտության ապրելակերպի վրա:

❖ «**Ինձ**» Անգամ դատաստանի տեսարանը կոչ է մտերմիկ փոխհարաբերության: Ամբարշտի համար այն դատաստանի և բաժանման կոչ է: Ծեսերի վրա կենտրոնացած հավատացյալների համար՝ փոխվելու կոչ է:

❖ «**ուխտ**» Այս վճռորոշ աստվածաբանական տերմինը (BDB 136) երբայերեն չէ: Այս հասկացությունը լավագույնս է նկարագրում ինքնիշխան Աստծուն և մարդկային արարածների օգտին պարտադիր, շարունակական, պատասխանատու ընտրությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՈՒԽՏ

❖ «**զոհաբերությամբ**» Տես ստորև տրված Հատուկ Թեման՝

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՉՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ ԵՎ ԻՍՐԱԵԼՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ SPECIAL TOPIC: SACRIFICES IN MESOPOTAMIA AND ISRAEL AND THEIR SIGNIFICANCE

(Այս գրառումները իմ ՀԿ-ի ուսումնասիրության առցանց գրառումներից են վերցված: Նաև տես NIDOTTE, հատոր 4, էջ՝ 1022-1022 էջում տեղադրված սանդղակը):

Ա. Ծիսակարգերը Միջագետքում

1. Չոհաբերությունը հիմնականում որևէ աստծու մատուցված կերակուր էր: Չոհասեղանը այդ աստծու սեղանն էր, որտեղ դրվում էր կերակուրը: Չոհասեղանի կողքին խնկամանն էր, որով գրավում էին աստծու ուշադրությունը: Արյան մեջ ոչ մի ծիսական նշանակություն չկար: Կենդանուն սպանողը կտրում էր նրա կոկորդը: Կերակուրը բաժանվում էր աստվածների, քահանա թագավորի և մասնակիցների միջև: Չոհ մատուցողին ոչինչ չէր հասնում:
2. Ազատագրման զոհ գոյություն չուներ:
3. Հիվանդությունը կամ ցավը աստվածներից էին: Ինչ-որ կենդանի էր բերվում և սպանվում. սա հանդիսանում էր մատուցողի համար որպես փոխանորդ:
4. Իսրայելի ծիսակարգը տարբերվում էր և յուրահատուկ էր: Կարծես թե դրա իմաստը նրանում էր, որ զոհ մատուցողը Աստծուն էր վերադարձնում իր աշխատանքի մի մասը՝ անհրաժեշտ կերակուրի համար (տես՝ Ծննդ. 4:1-4, 8:20-22):

Բ. Ծիսակարգերը Քանանում (շատ նման Իսրայելի ծիսակարգերին)

1. Աղբյուրները.
 - ա. աստվածաշնչյան դեպքերը,
 - բ. Փյունիկյան գրականություն,
 - գ. Ռաս Շամրայի արձանագրությունները Ուգարտայից, Քանանի աստվածների դիցաբանության վերաբերյալ՝ Բ. Ա. 1400թ-ից,
2. Իսրայելի և Քանանի զոհաբերությունները շատ նման են իրար, սակայն Քանանի զոհաբերությունների մեջ զոհի արյունը ընդհանրապես չի շեշտադրվում:

Գ. Ծիսակարգերը Եզիպտոսում.

1. Մատուցվում էին զոհեր, սակայն չէին կարևորվում
2. Կարևորը զոհը չէր, այլ զոհ մատուցողի վերաբերմունքը
3. Չոհեր կատարվում էին, որպեսզի հանգստացնեին աստվածների բարկությունը
4. Չոհ մատուցողը ազատագրման կամ ներման հույս ուներ

Դ. Իսրայելի զոհաբերության համակարգը. Իսրայելի զոհաբերությունները ավելի մոտ էին Քանանին, չնայած որ ամենևին էլ պարտադիր չէ, որ դրանց հետ կապ ունեին:

1. Նկարագրող արտահայտություններ.
 - ա. Չոհաբերությունն անմիջականորեն արտահայտում էր մարդկության Աստծո կարիքը:
 - բ. ՀԿ-յան օրենքները, որոնք կարգավորում էին զոհաբերությունները, չենք կարող ասել, որ զոհի նախաձեռնողն էին (տես՝ Ծննդ. 7:8, 8:20):
 - գ. Չոհաբերությունը մի տեսակ նվիրատվություն էր՝ ընծա (կենդանու կամ բանջարեղենի)
 - դ. Նվիրատվությունը՝ Աստծուն մեծարելու համար, պետք է ամբողջովին կամ մասամբ սպանվեր զոհասեղանի վրա
 - ե. Չոհասեղանը զոհատեղին էր և խորհրդապատկերում էր Աստծո ներկայությունը: Չոհաբերությունը արտաքին երկրպագության գործողություն էր (գործադրվող աղոթք):
 - զ. Չոհաբերության սահմանումն էր «գործադրված աղոթքները» կամ «ծիսական աղոթքները»: Ծիսակարգի նշանակությունը և դրա դեմ մեր մշակույթի հակվածությունը քննարկվում է Գորդոն Ջ. Ուենհեմի գրքում (Թինդեյլ, *Թվոց*, էջ՝ 25-39 /Gordon J. Wenham *Numbers*): Ղևտացիների և Թվոց գրքերը նմանատիպ բազմաթիվ նյութեր են պարունակում, որոնք ներկայացնում են Մովսեսի և Իսրայելի համար զոհաբերության իմաստը:
2. Չոհաբերությունը բովանդակում է.
 - ա. Ընծաներ Աստծուն՝
 - 1) պարունակում է այն գիտությունը, որ ամբողջ երկիրը Տիրոջն է,
 - 2) ամեն ինչ, որ մարդն ունի, դրանց համար պարտական է Աստծուն,
 - 3) հետևաբար, ճիշտ է, որ մարդը Աստծուն տուրք մատուցի,
 - 4) այն հատուկ տուրք էր կամ ընծա, մի բան, որով մարդը կարիք ուներ պահպանելու իր իսկ գոյությունը: Ինչ-որ բան տալուց առավել այն անհրաժեշտություն էր մարդուն համար: Դա նշանակում էր իրենից մի ինչ-որ մասնիկ Աստծուն նվիրաբերել:
 - 5) ընծան հեղելով կամ սպանելով Աստծո համար, այլևս հնարավոր չէր վերադարձնել
 - 6) ողջակեզը դառնում էր անտեսանելի և բարձրանում էր վեր՝ Աստծո թագավորություն
 - 7) նախկինում, ավելի վաղ ժամանակներում, զոհասեղաններ կառուցվում էին այն վայրերում, որտեղ Աստված հայտնվում էր մարդկանց: Չոհասեղանը սկսվեց դիտարկվել որպես սուրբ վայր, հետևաբար, զոհը բերում էին այդտեղ մատուցելու:
 - բ. Արտահայտում էր իր ամբողջ կյանքի նվիրաբերումն Աստծուն .
 - 1) Ողջակեզը հանդիսանում էր երեք կամավոր զոհաբերություններից մեկը:
 - 2) Կենդանին ամբողջությամբ այրվում էր, արտահայտելու Աստծո հանդեպ մեր ունեցած խորը մեծարանքի զգացումը:
 - 3) Սա շատ տպավորիչ ընծա էր Աստծո համար:

գ. Աստծո հետ հաղորդակցություն.

- 1) զոհաբերության հաղորդակցելի մասը
- 2) օրինակն է խաղաղության զոհը, որը խորհրդապատկերում է Աստծո և մարդու փոխհարաբերությունը
- 3) զոհաբերությունը կատարվում էր այս փոխհարաբերությունը ձեռք բերելու կամ վերականգնելու համար

դ. Մեղքի թողություն.

- 1) երբ մարդը մեղանշում էր, նա պետք է խնդրեր Աստծուն, որ վերականգնի այն փոխհարաբերությունը (ուխտի), որը խաթարվել էր
- 2) խաթարված փոխհարաբերության պատճառով, մեղքի զոհաբերության հետ բոլորին կերակուր մատուցել չէր թույլատրվում
- 3) արյան կարևորությունը
 - (ա) դրվում էր զոհասեղանի վրա մարդու համար
 - (բ) դրվում էր վարագույրի՝ քողի վրա, քահանայի համար
 - (գ) դրվում էր քավության տապանակի վրա՝ Քահանայապետի և ժողովրդի համար (Գևտ. 16)
- 4) գոյություն ունեին երկու տեսակ մեղքի զոհաբերություններ: Երկրորդը կոչվում էր հանցանքի զոհ: Այս զոհի ժամանակ մեղավորը պետք է իր աչքերում վերականգնել իր խարայելացի ընկերոջը, որի հանցանքը վերցվում կամ սպանվում էր կենդանու զոհի հետ միասին:
- 5) կանխամտածված կամ դիտավորյալ մեղքի համար զոհ գոյություն չունեի, 4:1,22,27, 5:15-18, 22:14

Ե. ՏԱՐԲԵՐ ՉՈՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. ԳԼՈՒԽ 1.

ա. Ներածական Մահմանում, «Տերը խոսեց Մովսեսին», 1:1-2, 4:1, 5:14, 6:1,19, 7:22,28

- 1) Նախիրներից կամ հոտերից
- 2) «Երբ /եթե/», հ. 2, ցույց է տալիս, որ սա պարտադրաբար չէր, այլ հոժարակամ

բ. Ողջակեզ, հհ. 3-17 (6:8-13)

- 1) Չոհասեղան
 - (ա) անաչառ զոհասեղանը, որը նաև կոչվում էր ողջակեզի զոհասեղան, Խորանի դռնով զոհասեղան կամ բրոնզապատ սատիմի փայտից զոհասեղան (տես՝ Ելից 27):
 - (բ) սրանով էր այն տարբերվում Սրբարանի (տես՝ Ելից 30) խունկի զոհասեղանից (ոսկե զոհասեղան):
 - (գ) ողջակեզի զոհասեղանից ածուխներ էին տարվում խունկի զոհասեղանի համար
 - (դ) ողջակեզի զոհասեղանը գտնվում էր Խորանի մուտքի հենց մեջտեղում
 - (ե) զոհասեղանն ուներ եղջյուրներ, որոնք հանդիսանում էին դրա ամենատուրբ մասը: Արյունը ցողվում էր եղջյուրներին (տես՝ Ելից 30:10)
 - (զ) եղջյուրները հավանաբար նախատեսված էին որպես՝
 - i. ձեռքերի սիմվոլ, որոնք զոհը վեր էին պարզում
 - ii. ուժի կամ գերակայության սիմվոլ (2 Օր. 33:17, 2 Թագ. 22:3)
 - iii. հետագայում, այն մարդիկ, որոնք ամուր բռնում էին զոհասեղանի եղջյուրները, ապահով էին մինչև դատարանը կակայոցներ իրենց դատը (3 Թագ. 1:50-51, 2:28)

- 2) Չոհր
 - (ա) անարատ ցուլ, որը առաջինն է նշվում, իր կարևորության և արժեքի պատճառով, հ. 3
 - (բ) արու այծ կամ ոչխար, հ. 10
 - (գ) տատրակներ կամ մատղաշ աղավնիներ, հ. 14 (աղքատների համար)
- 3) Ողջակեզի վայրը Ժողովքի Վրանի դռան մոտ էր
- 4) Ձեռնադրումը միայն ցիկների համար էր, ոչ թե այծերի, ոչխարների կամ թռչունների, հ. 4
 - (ա) զոհ մատուցողն ինքն էր սա անում (ոչ թե քահանան)
 - (բ) շատերը կարծում են, որ սա հանցանքը փոխանցելու սիմվոլիկ գործողություն է
 - (գ) ոմանք էլ հավատում են, որ՝
 - i. դա նշանակում է, որ տվյալ կենդանին պատկանում է այդ անհատին
 - ii. զոհը պետք է ներկայացվեր մատուցողի անունով
 - iii. այս զոհի պտուղը պատկանում է այն մարդուն, որը ձեռնադրում է կենդանուն
- 5) Չոհր կտրելը.
 - (ա) ցուլը կտրվում էր «Տիրոջ առջև» այն մարդու կողմից, որը կատարում է զոհը: Մատուցողը պետք է սպանի զոհին, մորթագերծի և կտրաստի: Քահանայի դերը (բացառությամբ հանրային զոհերի) սկսվում է այն ժամանակ, երբ զոհ մատուցողը զոհին բերում է զոհասեղանի մոտ:
 - (բ) ոչխարը կամ այծը՝ հ. 11 - «զոհասեղանի հյուսիսային կողմում, Տիրոջ առաջ»: Այս հատուկ վայրը նախատեսված էր ավելի փոքր կենդանիների համար:
 - (գ) թռչունը. այս զոհին սպանում և մատուցում էր քահանան: Մատուցողը պետք է միայն դեն նետեր թռչնադրը:
- 6) Արյան կիրառությունը.
 - (ա) կենդանիների
 - i. Քահանան արյունը բերում է զոհասեղանի մոտ և շրջանաձև ցողում զոհասեղանի վրա:
 - ii. Կենդանու կյանքը նրա արյան մեջ էր (տես՝ Ծննդ. 9:4, Ղևտ. 17:11): Կյանքն արդեն իսկ պատկանում էր Աստծուն, հետևաբար արյունը ոչ մի մաս չէր ներկայացնում մարդու ընծայի մեջ:
 - iii. Թռչնի արյունը քամվում էր զոհասեղանի կողքին և չէր այրվում կրակի մեջ:
- 7) Մարմնի գործածությունը.
 - (ա) ցուլը, հ. 6
 - i. Չոհ մատուցողը մաշկազերծում էր զոհին: Քահանան կարող էր իրեն պահել մորթին (տես՝ 7:8):
 - ii. Մատուցողը զոհի մարմինը կտորների էր բաժանում
 - iii. Քահանան զոհը դնում էր զոհասեղանի վրա նույն այն դասավորությամբ ինչպես կենդանի ժամանակ էր
 - iv. ոտքերը և փորոտիքը ջրով լվացվում էին ջրակոնքից
 - v. քահանան ամբողջը այրում էր զոհասեղանի վրա
- գ. Երբ էր պետք մատուցել ողջակեզ
 - 1) Տաղավարահարաց՝ վրանների Տոնին
 - 2) Քավության Օրը
 - 3) Շաբաթների Տոնին, Երեխայրիքի Տոնին կամ Պենտեկոստեին

- 4) Փողերի Տոնին
- 5) Տարութերվոյ Խուրձի Տոնին (Ղևտ. 23)
- 6) Բաղարջակերաց Տոնին՝ Չատկին
- 7) Ամսագլուխների Տոնին՝ Նոր Լուսնի Տոն
- 8) Շաբաթի Տոնին

դ. Ողջակեզի նշանակությունը .

- 1) Աստծուն ընծա,
- 2) Դիտարկվում էր որպես ամենաթանկ գոհը,
- 3) Այն կարծես թե գործ ուներ ընդհանուր առմամբ մեղքի հասկացողության կամ գոհունակության հետ
- 4) Չոհարերության գաղափարի ամենակատարյալ ներկայացումն էր,
- 5) Այլաբանորեն մարդու կյանքի զոհաբերության իմաստն ուներ,
- 6) Ներկայացնում է անհատի կողմից Աստծո ծառայությանը լիարժեք նվիրվելու իմաստը,
- 7) Չոհի տեսակավորված արժեքը .
 - (ա) ցուլ
 - (բ) ոչխար, այծ
 - (գ) թռչուններ
- 8) Սա ցույց է տալիս, որ ցանկացած մարդ, որ գիտակցում է հոգևոր իր կարիքը, կարող է մոտենալ Աստծուն: Աստված բոլոր մարդկանց էլ հոգ է տանում:

ե. Հատուկ կարգադրություններ քահանաների համար, 6:8-12

- 1) Ողջակեզը ամբողջ գիշեր մնում էր զոհասեղանի կրակատեղում
- 2) Կրակը պետք է միշտ վառ պահվեր ողջակեզի տակ այրվելիս
- 3) Կարգադրություններ, որոնք Քահանայի հագուստին էին վերաբերում
- 4) Մոխիրը հեռացնելու վերաբերյալ կարգադրություններ

2. ԳԼՈՒԽ 2:1-16 (6:14-23)

ա. Ներածություն

- 1) Այս գլխում խոսվում է ցորենի ընծայի մասին
- 2) Յորենի ընծան՝ գոհը, ծագել է արմատ հանդիսացող «ընծա» բառի նշանակությունից: Այն դարձել է տեխնիկական տերմին ոչ կենդանական կամ բուսական գոհերի՝ ընծաների համար:
- 3) Գերությունից հետո ցորենի ընծան հայտնվում է որպես հավելում ողջակեզի և խաղաղության զոհի համար և ռաբբիները ասում են, որ այն կարող էր առանձին էլ մատուցվեր շատ աղքատ մարդկանց կողմից:
- 4) Թվոց 18:19 և 2 Մնաց. 13:5-ում նաև նշվում է աղի ուխտի մասին: Աղը թթիամորի հակադրությունն էր: Այն կիրառվում էր որպես Աստծո ուխտի խորհրդապատկեր, քանի որ անապականացու էր և երկար մնացող:

բ. Յորենի ընծան իրենից ներկայացնում էր մարդու աշխատանքի նվիրումն Աստծուն:

- 1) Աստծուն ընծա էր մարդկանց ամենօրյա կերակուրից
- 2) Ընդհանրապես համեմունք էր (հատկապես գերությունից հետո ժամանակներում) ողջակեզին կամ խաղաղության զոհին:
- 3) Չոհը հանդիսանում էր քահանայի համար Աստծո հոգածությունը: Միայն մի փոքր մասն էր այրվում որպես ամբողջի հիշատակ:
- 4) «Հիշատակ» բառը նկարագրում է մատուցված չափաբաժինը, կամ էլ այն բաժինը, որը բերում է ամբողջականը Տիրոջ առաջ:

- 5) Տիրոջ Ընթրիքի Նոր Կտակարանյան գաղափարը որպես «հիշատակ» արտահայտում է Հին Կտակարանի այս նույն հասկացությունը:
- 6) «Սուրբ» և «ամենասուրբ» տերմինների միջև տարբերությունը՝
 - (ա) «սուրբ». քահանան և իր ընտանիքը կարող էին ուտել այն որևէ մաքուր վայրում
 - (բ) «ամենասուրբ». կարող էին ուտել միայն քահանաները և միայն Ժողովքի Վրանի /Խորանի/ սրահում

գ. Տեսակները

- 1) Չթխված այուր (հարուստների համար), 2:1-3
- 2) Թխված հացեր կամ խմորեղեն, 2:4-11
- 3) Եգիպտացորենի կամ ցորենի կանաչ հասկերը (աղքատների համար), 2:12-16
 - (ա) Չթխված այուրը հանդիսանում էր ամենաբարձր զոհաբերությունը: Դա ամենաընտիր ցորենի այուրից էր:
 - (բ) Թխված խմորեղեններ
 - i. բաղադրիչներից էր նաև յուղը
 - ii. թոնրում պատրաստված, հ. 4
 - iii. տապակի վրա, հ. 5
 - iv. սանի մեջ եփված, հ. 7
 - (գ) Եգիպտացորենի կամ ցորենի կանաչ հասկերը /թարմ հասկերը/
 - i. պետք է ծեծված լիներ
 - ii. մանր կտորների կտրատված
 - iii. զարդարված՝ ինչպես հյուրերի առջև դրվող կերակուր

դ. Բաղադրիչները.

- 1) Ընտիր այուրը համապատասխանում է անարատ կենդանուն
- 2) Յուղը բարգավաճման խորհուրդն էր և հետևաբար Աստծո ներկայության սիմվոլը
 - (ա) կիրառվում էր որպես սնունդ, զոհ, դեղամիջոց և օծություն
 - (բ) Հավանաբար յուղի կիրառությունը փոխարինում էր յուղի ընծային՝ զոհին
- 3) Անուշահոտ խունկը Հնդկաստանից կամ Արաբիայից էր
 - (ա) Դիտարկվում էր որպես անուշահոտությամբ շատ մաքուր մի բան
 - (բ) Խորհրդանշում էր աղոթքն ու փառաբանությունը
- 4) Աղը.
 - (ա) Կյանք տվող ինչպես նաև պահպանող հատկությամբ
 - (բ) Հավանաբար ավելի շատ սեղանի համար, քան պահպանության
- 5) Բացառվող տարրերը.
 - (ա) Թթխմորը բացառվում էր, հ. 11
 - i. հավանաբար թթվելու՝ հասունանալու պատճառով
 - ii. թթխմորը ասոցացվում է ապականության հետ
 - iii. կարող էր մատուցվել երեխայիքի՝ առաջին պտղի հետ և քահանային
 - (բ) Մեղրը բացառվում էր՝
 - i. քաղցրաչուրը պտղաչուր էր և ոչ թե մեղրաչուր
 - ii. հավանաբար այն բանի համար, որ քանանացիները իրենց ծեսերում մեղր էին կիրառում

ե. Մատուցման ծիսակարգը՝

1) Այն բերվում էր քահանայի մոտ: Նա էր վարում ամբողջ արարողությունը (2:2, 9, 16)

2) Ընծայի մի մասը պետք է սրբարանում քահանան ուտեր: Այն ամենասուրբ էր:

գ. Նշանակությունը

1) Նվեր ստորադասից գերադասին

2) Դրա մի մասի այրումը ներկայացնում էր տվյալ անձի աշխատանքի մի մասի նվիրաբերումն Աստծուն

3) Ակնհայտ իմաստը՝

(ա) Ողջակեզ. անձի կյանքի նվիրումը

(բ) Մենդի ընծա. անձի ամենօրյա աշխատանքի նվիրաբերում

է. Տորենի Ընծայի համար հատուկ կարգադրություններ, 6:14-23

1) Չոհասեղանի առաջ մատուցել

2) Որպես ընծա Աստծուն մատուցված աշխատանք, սակայն իրականում այն ապահովում էր քահանայությանը

3. ԳԼՈՒԽ 3:1-17 (7:13-34) ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՉՈՂ

ա. Ներածություն

1) Ինչու

(ա) հաղորդության ընծա

(բ) ուխտի գոհ

(գ) միասնական գոհ

(դ) եզրափակիչ գոհ

2) այն գոհունակություն էր արտահայտում Աստծուն՝ ընտանիքի, ընկերների և Աստծո հետ իր փոխհարաբերության համար

3) Սովորաբար հանդիսանում էր մի շարք գոհաբերությունների վերջին փուլը, որի ժամանակ հաշտություն էր հաստատվում:

4) Ողջակեզը արտահայտում էր հնազանդության թանկարժեքությունը, մինչև խաղաղության գոհն արտահայտում էր Աստծո հետ հաղորդակցության ուրախությունն ու ցնծությունը:

5) Արու կամ էզ, սակայն անարատ

6) Տարբեր գոհեր.

(ա) նախիրից՝ արու կամ էզ

(բ) տարբերությունը, որ դրված էր ոչխարի և այծի միջև, ոչխարի պոչի յուղի (դմակի) պատճառով էր

i. հոտերից գառ՝ արու կամ էզ

ii. հոտերից այծ՝ արու կամ էզ

բ. Ծիսակարգը.

1) Չոհին ներկայացնելը

(ա) Չոհին ձեռնադրում էին

(բ) Ժողովքի Վրանի մոտ մորթվում էր

(գ) Չոհի հետ ընթացակարգերը նույնն են, ինչ ողջակեզի ժամանակ

(դ) Արյունը ցողվում էր գոհասեղանի շուրջբոլորը

(ե) Ընտրված մասերը այրվում էին գոհասեղանի վրա՝ Աստծո առաջ

i. յուղը (ոչխարի դմակը) խորհրդանշում էր բարգավաճում

ii. երիկամները, լյարդը խորհրդանշում էին կամքի և զգացմունքների տեղը

iii. յուրոտ մասերը դրվում էին զոհ մատուցողի ողջակեզների վրա կամ առավոտյան գառան զոհաբերության վրա

- 2) Գոհության զոհը՝ ընծան պարունակում էր (7:11-14)
 - (ա) Յուդի հետ շաղախված անթթխմոր հաց
 - (բ) Յուդով ցողված անթթխմոր չորահացեր
 - (գ) Յուդով շաղախված ընտիր այուր

գ. Քահանայի մասնաբաժինը, 7:28-34.

- 1) Կրծքամիսը պատկանում էր քահանային, որպես տարուբերվող ընծա
- 2) Տարուբերելը իրենից ներկայացնում էր մատուցողի և քահանայի ձեռքերի մեջ զոհը դնելը: Այն ցույց էր տալիս, որ զոհը մատուցվում էր մատուցողների կողմից Աստծուն, և դրա ընդունվելը հետադարձվում էր քահանային տալով:
- 3) Աջ ազդրը՝ զիստը պատկանում էր պաշտոնավարող քահանային
- 4) Բարձրացվող զոհը Աստծուն էր բարձրացվում և ընդունվում էր քահանայի կողմից

դ. Մատուցողի մասնաբաժինը, 7:15-18

- 1) Գոհության՝ շնորհակալության ընծան պետք է ուտեին հենց մատուցման օրը, հ. 15
- 2) Ուխտի կամ կամավոր ընծան պետք է ուտեին մատուցման օրը կամ դրան հաջորդող օրը, հ. 16
- 3) Այս բաժինն այն էր, որ չէր մատուցվել Աստծուն և Աստուծոց տրվել քահանային
- 4) Խորհրդապատկերորեն Աստված ուտում է մատուցողի և նրա ընտանիքի ու ընկերների հետ միասին այս զոհի ժամանակ
- 5) Այս ընծան շեշտադրում է, որ փոխհարաբերությունները վերականգնված են:

4. ԳԼՈՒԽ 4:1-5:13 (6:24-30) ՄԵՂՔԻ ՊԱՏԱՐԱԳ

ա. Ներածություն.

- 1) Առաջին պատարագն է, որտեղ քավությունը գերակայող տարր է հանդիսանում:
- 2) Այս զոհը՝ պատարագը, վերահաստատում է մարդու և Աստծո միջև ուխտը: Այն վերականգնում է փոխհարաբերությունը:
- 3) Այս պատարագը պարունակում է՝
 - (ա) Անտեղյակության մեղքերը
 - (բ) Անուշադրության մեղքերը
 - (գ) Ցանկության մեղքերը
 - (դ) Բացթողումների մեղքերը
 - (ե) Չէր քավում դիտավորյալ, մեծամտորեն, ապստամբությամբ Աստծո դեմ կատարած մեղքերը: Դիտավորյալ, կանխամտածված, բարձրացած ձեռքով մեղքի համար պատարագ՝ զոհ չկար (տես՝ Թվոց. 15:27-31):

բ. Նշանակությունը.

- 1) Այս զոհը քավում էր մեղքերի հանցանքն ու պատիժը:
- 2) Պարունակում էր Աստծո կողմից շնորհքի մասը և մարդու կողմից՝ հավատքի:
- 3) Ոչ մի զոհաբերություն չէր կարող հասնել որևէ բանի միայն ծիսակարգի միջոցով: Գործողության ետևում կանգնած էր զոհ մատուցողի հավատքը:

- 4) Չնայած դրան, գոհն ավելին էր, քան միայն մատուցողի կողմից կատարած արտահայտություն: Այն իր համար ինչ-որ բան էր անում: Դա վերահաստատում էր Աստծո հետ իր փոխհարաբերությունը:
- 5) Ծեսը Աստծո կողմից տրված ընթացակարգ էր և ոչ թե անձնական հավատքին փոխարինող գործողություն:
- 6) Աստված ատում է ցանկացած կրոնավոր գործողություն, որը չի կատարվում հավատքով. Եսայի 1:1-20, Ամովս 5:21-24, Միքիա 6:6-8:

գ. Ծիսակարգը .

1) Քահանայապետի համար, հհ. 3-12

(ա) Քահանայապետ՝ օծված քահանա .

- i. Մարդկանց սխալ առաջնորդելու մեղքի համար
- ii. Անձնական բնույթի մեղքի համար
- iii. Քահանայապետը լինելով համայնքի հոգևոր ներկայացուցիչը, եթե մեղք էր գործում, ապա նրա մեջ բոլորն էին մեղք գործում: Համայնքի վերաբերյալ հրեական հասկացությունն այսպիսին է (տես՝ Հեսու 7, Հռոմ. 5:12):

(բ) Ընթացակարգերը .

- i. Քահանայապետը բերում էր անարատ ցլիկին զոհասեղանի մոտ,
- ii. Նա իր ձեռքերն էր դնում նրա գլխի վրա,
- iii. Քահանայապետը մորթում էր կենդանուն,
- iv. 7 անգամ արյուն էր ցողում վարագույրի առջև .
 - ա) Սա մաքրում էր Խորանը
 - բ) սիմվոլիկ կերպով ճանապարհ էր բացում դեպի Աստված
 - գ) խնկի զոհասեղանի եղջյուրներին արյուն էր քսվում
 - դ) մնացած արյունը լցվում էր ողջակեզի զոհասեղանի հիմքի վրա
- v. Ամբողջ ճարպը դրվում էր զոհասեղանին
- vi. Կենդանու մնացած մասերը դուրս էին բերվում ճամբարից մի մաքուր վայր, հ. 12, որտեղ թափվում էին զոհասեղանից վերցված մոխիրը: Այնտեղ այրվում էր կենդանու մնացորդը:

2) Ազգի՝ ժողովրդի համար, հ. 13-21

(ա) Նրանք մեղանչում էին, երբ օրենքի պատվիրանները չէին պահում, հհ. 13-21

(բ) Ընթացակարգերը .

- i. Ծերերը զոհասեղանի մոտ էին բերում մի անարատ ցլիկ,
- ii. Ծերերը ձեռնադրում էին ցլիկի գլուխը,
- iii. Նրանք մորթում էին կենդանուն,
- iv. Քահանայապետը 7 անգամ արյուն էր ցողում վարագույրի առջև .
 - ա) Սա մաքրում էր Խորանը
 - բ) սիմվոլիկ կերպով ճանապարհ էր բացում դեպի Աստված
 - գ) խնկի զոհասեղանի եղջյուրներին արյուն էր քսվում
 - դ) մնացած արյունը թափվում էր զոհասեղանի հիմքի վրա:
- v. Այս ամբողջը մատուցվում էր զոհասեղանի վրա
- vi. Կենդանու մնացած մասը ճամբարից դուրս մի մաքուր վայր էր տարվում, հ. 12, որտեղ թափվում էր զոհասեղանի մոխիրը: Այնտեղ այրվում էր կենդանուց մնացած մասերը:

3) Առաջնորդի համար, հհ. 22-26

(ա) Առաջնորդը (իշխան) հհ. 22-26

- i. Յեղապետը
 - ii. Համայնքում պատասխանատու անձը
 - iii. Վերակացուն
- (բ) Ընթացակարգերը.
- i. Առաջնորդը զոհասեղանին մի նոխազ էր մոտեցնում (մեծ, արու, թավամազ այծ)
 - ii. Առաջնորդը ձեռքերը դնում էր կենդանու գլխին,
 - iii. Առաջնորդը մորթում էր կենդանուն,
 - iv. Քահանայապետը ողջակեզի զոհասեղանի եղջյուրներին արյուն էր սրսկում և մնացած արյունը թափում էր զոհասեղանի հիմքի վրա,
 - v. Ամբողջ ճարպն այրվում էր զոհասեղանի վրա,
 - vi. Քահանաները ուտում էին մսի մնացած մասը:
- 4) Անհատի համար, հհ. 27-35
- (ա) Անհատը, երբ հասկանում էր, որ մեղք է գործել, պետք է մատուցեր այսպիսի զոհ.
- (բ) Ընթացակարգերը.
- i. Անհատը բերում էր էգ այծ կամ էգ գառ,
 - ii. Ձեռքերը դնում էր կենդանու գլխի վրա,
 - iii. Անհատը մորթում էր կենդանուն,
 - iv. Քահանան զոհասեղանի եղջյուրներին արյուն էր սրսկում, մնացած արյունը թափում էր զոհասեղանի հիմքին,
 - v. Ամբողջ ճարպը դրվում էր զոհասեղանին և այրվում,
 - vi. Քահանաները ուտում էին մնացած միսը:
- 5) Հատուկ դեպքեր, որոնք պահանջում էին մեղքի պատարագ, 5:1-13 (Մա կարծես թե ընդգրկում է նաև ուխտի կողակցի դեմ կատարած դիտավորյալ մեղքը):
- (ա) Եթե որևէ վկա առաջ չի գալիս և վկայություն տալիս (ինֆորմացիայի պակասի դեպքում), 5:1
- (բ) Անմաքուր կենդանու դիպչելիս, 5:2
- (գ) Անմաքուր մարդու դիպչելիս, 5:3
- (դ) Անմտածված երդմամբ խոսելու դեպքում, 5:4
- (ե) Վերը նշված մեղքերի համար պատարագը՝
- i. Էգ այծ կամ ոչխար
 - ii. Երկու տատրակ կամ երկու աղավնի
 - iii. արդուի 1/10 չափ ընտիր այուր
- 6) Մեղքի պատարագի ծիսակարգը, 6:24-30
- (ա) Քահանան կարող էր ուտել այն ինչ մնացել էր
- (բ) Եթե հանդերձների վրա արյուն էր թափվել, պետք է դրանք լվացվեին
- (գ) Եթե կավե ամանի վրա էր արյուն թափվել, ապա այն պետք է կտորվեր
- (դ) Եթե պղնձե ամանի մեջ էր գոհր եփվել, ապա այդ ամանը պետք է լավ լվացվեր
- (ե) Եթե ողջակեզի արյունը Սրբարան էր բերվել, ապա միսը պետք է այրվեր և քահանան չէր կարող ուտել դրանից:
- 7) Մեղքի Պատարագի նշանակությունը
- (ա) Կանխամտածված մեղքի համար զոհ չկար. միայն անուշադրությամբ կատարված կամ անտեղյակության մեղքերի համար, 5:15, 18:
- (բ) Ինչ է պարունակում իր մեջ ներումը՝
- i. Մարդու բաժինը հավատքն է,

ii. Աստծո բաժինը՝ ողորմությունը:

5. ԳԼՈՒԽ 5:14-19 ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՍ ՀԱՆՑԱՆՔԻ ՊԱՏԱՐԱԳ

ա. Ներածություն

- 1) Մինչ մեղքի պատարագը գործ ուներ գործված մեղքի հետ, հանցանքի պատարագը վերաբերում էր այն վնասին, որը հասցվել էր ուխտի գործընկերոջը և նրան, թե ինչ հնարավոր փոխհատուցում էր անհրաժեշտ:
- 2) Մեղքի և հատուցման պատարագները շատ նման էին
- 3) Անհատի իրավունքներն արտահայտված Տաս Պատվիրաններում (Ելից 20, 2 Օր. 5)
(ա) տուն
(բ) ունեցվածքի կուտակում
(գ) կյանք
- 4) Այս պատարագը շեշտադրում է մեր եղբոր դեմ մեղանչելու տեսքով կատարած վնասը և վնասված առարկայի արժեքի փոխհատուցումը՝ դրան ավելացրած արժեքի 1/5 մասը:

բ. Մեղքեր, որոնք պատարագ էին պահանջում.

- 1) Աստծո կամ Նրա սեփականության դեմ կատարած մեղքերը.
(ա) երեխայիժը՝ առաջին պտուղները
(բ) առաջնեկները, 14-16
(գ) տասանորդը
(դ) ոչ ճիշտ կերպով կատարված պատարագը՝ ընծան
(ե) էժանագին ընծաները
- 2) «Եթե մեկը մեղանչում է և անում մի բան, որն Աստված պատվիրել է չանել, թեև նա անտեղյակ էլ լինի այդ մասին, միևնույն է հանցավոր է և պետք է կրի իր պատիժը»:

2. Հնում զոհերը, պատարագները մատուցվում էին մի քանի նպատակով.

- ա. աստվածների զայրույթը մարելու համար
- բ. աստվածներին կերակրելու համար
- գ. աստվածների հետ հաղորդակցվելու համար
- դ. փառաբանության համար
- ե. ներման կամ հաշտության կարիքի դեպքում:

50:6 Մա դարձվածքային հաստատություն է ՅԱՀՎԵԻ Արարիչ լինելու մասին, և հետևաբար, դատաստան անելու Նրա իրավունքը:

❖ «**Երկինքները կհռչակեն Նրա արդարությունը**» Մա հաստատում է «բնական հայտնությունը» (տես՝ Սաղմ. 8:3, 19:1-6, 97:6):

❖ «**Սեյա**» Տես՝ Սաղմոս 3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածություն, VII:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 50:7-15

⁷ «Լսի՛ր, ո՛վ Իմ ժողովուրդ, և Ես կխոսեմ, ո՛վ Իսրայել,

Եվ Ես քո դեմ կվկայեմ. Ես Աստված եմ՝ քո՝ Աստվածը:

⁸Քեզ քո զոհաբերությունների համար չեմ հանդիմանում,

Ո՛չ էլ՝ քո ողջակեզների, որ միշտ Իմ առջև են:

⁹Քո տնից ցլիկներ չեմ վերցնի, ո՛չ էլ քո հոտերից՝ նոխազներ:

¹⁰Քանի որ Իմն են անտառի բոլոր գազանները,
 Հազարավոր լեռների նախիրները:
¹¹Ես գիտեմ լեռների բոլոր թռչուններին,
 Ու դաշտի վայրի գազաններն իմ առջև են:
¹²Եթե սովածանամ, քեզ չեմ ասելու,
 Քանի որ աշխարհն ու նրա լիությունը իմն են:
¹³Մի՞թե ես ցլի միս եմ ուտում,
 Կամ նոխազների արյուն եմ խմում:
¹⁴Օրհնության պատարագ մատուցիր Աստծուն,
 Եվ կատարի՛ր քո ուխտերը Բարձրյալին
¹⁵Ու նեղության օրը կանչի՛ր Ինձ.
 Ես քեզ կազատեմ, ու դու կփառաբանես Ինձ»:

50:7-15 Այս պարբերությունը կարծես թե ունի երեք օջախ՝

1. խոսք ուղղված ծեսերի վրա կենտրոնացած Իր հետևորդներին
2. Իր ստեղծագործության վրա Իր Տիրակալության հաստատություն, ըստ որի Նա կարիք չունի մարդու կողմից կատարվող գոհերի, հատկապես, երբ դա մարդիկ անելիս կարծում են, որ այդժամ ՅԱՀՎԵՆ պարտավորվում է գործել իրենց օգտին:
3. սրտի հավատքի անհրաժեշտությունը (տես՝ 2 Օրինաց 10:16, Երեմ. 4:4), ոչ թե պարզապես գոհաբերության համակարգի ծես՝ պատարագ (տես՝ Սաղմ. 51:16-17, Եսայի 1:10-15, Ովս. 6:6, Ամովս 5:21-24, Միքիա 6:6-8):

50:7 Ուխտը կանչում է հետևորդներին լսելու, թե ինչ է ասում ՅԱՀՎԵՆ՝

1. լսի՛ր – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Դատավորը խոսում է
2. Ես կխոսեմ – BDB 180, KB 210, *Piel* ԸՂԶԱԿԱՆ
3. Ես քո դեմ կվկայեմ – BDB 729, KB 795, *Hiphil* ԸՂԶԱԿԱՆ

❖ Այս համարն ունի մի քանի արտահայտություններ, որոնք հայտնի են որպես ուխտի տերմինաբանություն՝

1. Իմ ժողովուրդ (տես՝ Ելից 19:5-6)
2. Ո՛վ Իսրայել (տես՝ 2 Օրինաց 6:4-5)
3. Ես Աստված եմ, քո Աստվածը (տես՝ Ելից 20:2, հաճախ Դևտացիներում)

Այստեղ անդրադարձ է կատարվում ուխտի հնագանդության կյանքի հարցին, ոչ թե պարզապես գոհաբերություններին: Չոհաբերությունը սուրբ Աստծո ներման և մեղավոր մարդկության հետ փոխհարաբերության մեջ մնալու ծիսական միջոց էր: Միտը նույնքան կարևոր էր (տես՝ 2 Օրինաց 10:16) որքան որ գործողությունը:

50:11 ՅԱՀՎԵՆ հաստատում է Իր Տիրակալությունը ամբողջ ստեղծագործության վրա: Նկատե՛ք կրկնվող «բոլոր», «ամեն բան» խոսքերի կիրառությունը (տես՝ 2 Օրինաց 10:14, Նեեմ. 9:6, Սաղմ. 103:19-22):

50:11	
NASB, NRSV	«ամեն ինչ, որ շարժվում է դաշտում»
NKJV	«դաշտի վայրի գազանները»
TEV	«դաշտի բոլոր կենդանիները»
NJB	«ինչ որ շարժվում է դաշտերում»
JPSOA	«դաշտի արարածները»
REB	«արոտավայրերի վիտացող կյանքը»

MT տալիս է «դաշտի շարժվող բաները» (BDB 265 I ԿԱԶՍՈՒԹՅԱՍԲ BDB 961): Առաջին բառը կիրառվում է միայն այստեղ և Սաղմ. 80:13-ում: Այն կարծես թե վերաբերում էր Ծննդոց 1:24-26-ի «վիտացող արարածներին»:

1. մանր կենդանիներին (այսինքն՝ մկնիկներին, առնետներին, աղվեսներին, և այլն)

2. միջատներին

Ինչ էլ որ դրանք լինեն, հանդիսանում են այս մոլորակի վրա բոլոր արարածների ՅԱՀՎԵԻ սեփականության մի օրինակը (տես՝ Սաղմ. 50:10ա):

50:12 Չոհարերությունները ՀԿ-ում երբեք չեն դիտարկվել որպես Աստծո համար կերակուր:

1. Միջագետքի աստվածաբանության մեջ աստվածները ուտում էին մարդկանց զոհերը:

2. Քանանացիների աստվածաբանության մեջ *Անսաթը* ուտում էր մարմին և խմում՝ արյուն:

Հնարավոր է զարմանաք, թե ինչքանով է Իսրայելի բառապաշարը (ոչ թե աստվածաբանությունը) ազդեցություն կրել առաջին հերթին քանանացիների դիցաբանությունից և հետագայում Հուդայականությունը՝ Չրադաշտականության աստվածաբանությունից:

50:14-15 Այս պարբերության վերջին երկու համարները նկարագրություն են այն մասին, թե ինչեր պետք է անեն ծեսերի վրա կենտրոնացած հետևորդները, որոնք անմիջական կապ չունեն Ղևտացիների 1-7-ի զոհերի հետ:

1. օրհնության՝ գոհության պատարագ մատուցի՛ր Աստծուն – BDB 256, KB 261, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, հնարավոր է սա խոսում է կատարված երդման մասին, տես՝ Սաղմ. 66:13-15

2. կատարի՛ր քո ուխտերը Բարձրյալին – BDB 1022, KB 1532, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (Թ-վոց 30, 2 Օրինաց 23:21, Սաղմ. 22:25, 56:12, 61:8, 65:1)

3. կանչիր Ինձ (այսինքն՝ աղոթք) քո նեղության օրը – BDB 894, KB 1128, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: Եթե նրանք անեն այս բաները, ապա ՅԱՀՎԵՆ «կփրկի» (այսինքն՝ «կազատի», BDB 457, KB 455, *Piel* ԱՆԿԱՏԱՐ) նրանցից յուրաքանչյուրին: Եվ դրան ի պատասխան յուրաքանչյուր մարդ «կպատվի» Աստծուն (BDB 457, KB 455, *Piel* ԱՆԿԱՏԱՐ):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 50:16-21

¹⁶Սակայն մեղավորին Աստված ասում է.

«Քեզ ի՞նչ, որ դու Իմ օրենքներն ես պատմում,

Կամ Իմ ուխտը բերանդ ես առնում:

¹⁷Քանի որ դու խրատն ատում ես ու Իմ խոսքերը քամահրում.

¹⁸Երբ մի գող ես տեսնում, նրա հետ ես ընթանում

Ու շնացողների հետ բաժնեկցում:

¹⁹Քո բերանը չարության ես տվել,

Ու քո լեզուն նենգություն է հորինում.

²⁰Նստում ես ու եղբորդ դեմ խոսում,

Մորդ որդու դեմ չարախոսում ես:

²¹Այս բաներն արեցիր, ու Ես լռեցի.

Կարծեցիր, թե Ես էլ քեզ նման եմ,

Բայց հանդիմանելու եմ քեզ ու հերթով աչքերիդ առաջ եմ շարելու:

50:16-21 Այս պարբերությունը ուղղված է անհավատ հետևորդին՝ այստեղ կոչվող «ամբարիշտ» (BDB 957): Մրանք ուխտի ժողովրդի մաս կազմող տղամարդիկ, կանայք, երիտասարդներ էին, ովքեր իրենց խոսքերով, գործերով և բացթողումներով ցույց էին տալիս իրենց ապստամբությունը, եսակենտրոն ապրելակերպը (այսինքն՝ խախտում էին Տաս Պատվիրաններից երեքը):

1. նրանք խոսում էին Աստծո և Նրա ուխտի մասին, սակայն արհամարհում էին այն, Սաղմ. 50:16 (այսինքն՝ հավանաբար ուխտի համարների կրկնությունը կամ ծեսերը, սակայն առանց հավատքի կյանքի):

2. նրանք ատում էին դրա պահանջները և անտեսում դրանք (այսինքն՝ «Իմ խոսքերը քամահրում», նրանք գործնական աթեիստներ էին), Սաղմ. 50:17, տես՝ Նեեմ. 9:26

3. նրանք ոչ միայն չէին ամաչում չար գործերից, այլ միանում էին նրանց, ովքեր չարագործներ էին, Սաղմ. 50:18 («նրանք պտուղից...» Մատթ. 7:16-20, 1 Կորնթ. 15:33):

4. նրանց խոսքերը հայտնում էր նրանց սրտերը, Սաղմ. 50:19-20 (տես՝ Մատթ. 12:33-37)

5. նրանք կարծում էին, որ ՅԱՀՎԵԻ համբերությունը նրանց հանդեպ հավանություն էր (տես՝ Ժող. 8:11, Եսայի 57:11)

Սակայն ՅԱՀՎԵՆ գործելու է՝

1. Ես կհանդիմանեմ քեզ – BDB 406, KB 410, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
2. Ես հերթով աչքերիդ առաջ եմ շարելու – BDB 789, KB 884, *Qal* ԸՂՁԱԿԱՆ, այսինքն՝ վարելու եմ օրինական դատ, տես՝ Հոբ 13:18, 23:4, 32:14, 33:5



NASB	«քեզ հաճելի է նա»
NKJV	«համաձայնվում ես նրա հետ»
NRSV, TEV, NJB	«ընկերանում ես նրան»
LXX	«միանում ես նրան»
JPSOA	«նրա հետ ես ընկնում»
REB	«նրան քեզ ընկեր ես ընդունում»

MT տալիս է «հաճելի» (BDB 953, KB 1280, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ով): LXX, Syrian, Vulgate թարգմանությունները տալիս են «գնում ես» կամ «միանում ես» նրա հետ, որը կարծես թե ավելի լավ է համապատասխանում գուգահեռականությանը: UBS Տեքստային Նախագիծը տալիս է MT շարադրմանը “B” գնահատական (որոշ չափով կասկածելի):

50:21 «կարծեցիր, թե ես էլ քեզ նման եմ» Այս արտահայտությունը ուժգնանում է «լինել» ԲԱՅԻ շնորհիվ թե՛ ԱՆՈՐՈՇ ԱԿՉՍՈՒԹՅԱՆ մեջ և թե՛ ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԻ դեպքում:

Սակերեսային հավատացյալները միշտ կարծում են, որ իրենք ապահովագրված են և իրենց հավատքը ճիշտ նույնն է ինչ Աստծունը: Հայտնությունը վերջնական միջնորդ դատավորն է՝ արբիտրը: Ընկած մարդիկ, անգամ ուխտի մեջ գտնվող, չեն հասկանում Աստծուն կամ Նրա Խոսքը, սակայն կարծում են, թե հասկանում են: Ինձ համար, որպես Աստվածաշնչի ուսուցիչ, շատ կարևոր է, որպեսզի պահպանեմ ուսանելի, գղջացող, խոնարհ հոգի: Իմ աստվածաբանությունը Աստծո աստվածաբանությունը չէ: Նա իմ ավանդության մի մասը չի կազմում: Ես պետք է հիշեմ, որ բոլոր մարդիկ՝

1. պատմականորեն հարաբերական են
2. մեղավոր, ապականյալ մարդիկ
3. ենթական դոգմատիզմի և ամբարտավանության

Ինչքան շատ ես իմանում, այնքան ավելի ես իմանում, որ չես իմանում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 50:22-23

²²Ուրեմն մտածե՛ք սրա մասին, դո՛ւք, որ մոռանում եք Աստծուն, Զլինի այնպես, որ ձեզ պատառոտեմ, և մի ազատող էլ չգտնվի:

²³Փառաբանություն մատուցողն Ինձ կփառավորի,

Ու ով իր ընթացքին զգուշություն անի,

Նրան ցույց կտամ Աստծո փրկությունը:

50:22-23 Սա ամփոփիչ սահմանում է, որը պատգամ ունի թե՛ ծիսական կողմնորոշմամբ հետևորդների (ենթատեքստով) և թե՛ անհավատ հետևորդների համար (ուղղակիորեն դիմում է): Երկուսն էլ պետք է «մտածեն» (BDB 106, KB 122, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ):

1. ամբարշտին՝
 - ա. որ մոռանում են Աստծուն, Սաղմ. 50:22ա
 - բ. դատաստանը կգա, և ոչ ոք չի փրկի, Սաղմ. 50:22բ
2. ի հակադրություն՝ հավատարիմին.
 - ա. որ գոհության պատարագ է մատուցում, Սաղմ. 50:23ա (տես՝ Սաղմ. 50:14ա)
 - բ. ով պատվում փառաբանում է Ինձ, Սաղմ. 50:12ա
 - գ. ով իր ընթացքին զգուշություն է անում

ՅԱՀՎԵՆ կրնաջնջի ամբարշտին (Սաղմ. 50:22բ), սակայն կազատի հավատարիմին (Սաղմ. 50:23գ):

50:22բ «չիհի այնպես, որ ձեզ պատառոտեմ» Սա ՅԱՀՎԵԻ որպես առյուծ նկարագրությունն է (տես՝ Սաղմ. 7:2, 17:12, Ովս. 5:14, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՌՅՈՒԾՆԵՐԸ ՀԿ-ՈՒՄ): Ապստամբությանը և շարունակական անհավատությանը ցավոտ հետևանքներ են սպասվում: Արդարությունն էլ առանց հետևանքների չէ:

❖ «մի ազատող էլ չգտնվի» Եթե Աստված մեր դեմ է, ո՞վ կարող է մեզ օգնել: Ինքը և միայն Ինքը կարող է ազատել: Այս նույն հասկացությունը արտահայտվում է դրական կերպով Հոռմ. 8:31-39:

50:23բ Սա պոեզիայի երկիմաստ մի տող է: Բառացիորեն այն նշանակում է «ընթացք»: ԲԱՅԸ (BDB 962, KB 1321) ունի լայն ստուգաբանություն: Անգլերեն թարգմանությունների մեծ մասը այն ներկայացնում են որպես աստվածավախ, ուխտի հնազանդ կյանքին վերաբերող խոսք: Անշուշտ հնարավոր է, որ այն նկատի ունի ճիշտ գոհը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս կվերնագրեիք այս Սաղմոսը:
2. Ի՞նչ երկու տեսակի ուխտի մարդիկ են այստեղ քննարկվում: (Սաղմ. 50:7-15, 16-21)
3. Ո՞վ է մեղադրվում:
4. Արդյո՞ք գոհը սխալ է»
5. Ի՞նչ է նշանակում «Աստված լուռ մնաց»: Ինչո՞ւ է Աստված լուռ մնում: (Սաղմ. 50:21)